ՍԴ3/0104/01/24
(ԱՎԴ1/0188/01/24)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23 սեպտեմբերի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0104/01/24 (ԱՎԴ1/0188/01/24) քրեական վարույթի տարածքային ընդդատության վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2024 թվականի հուլիսի 25-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Լեոնիկ Լևոնի

Հովհաննիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 3-րդ մասով և 525-րդ հոդվածի 5-րդ մասով թիվ 91259224 (ԱՎԴ1/0188/01/24) քրեական վարույթը:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հուլիսի 29-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ1/0188/01/24 քրեական վարույթն ստանձնելու և 2024 թվականի օգոստոսի 9-ին նախնական դատաքննություններ նշանակելու մասին:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 9-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ1/0188/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 4-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0104/01/24 (ԱՎԴ1/0188/01/24) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության մասին վեճը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի սեպտեմբերի 18-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2024 թվականի հունիսի 20-ի որոշմամբ Լ.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 3-րդ մասով և 525-րդ հոդվածի 5-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ *«նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 37564 զորամասի 2-րդ հրաձգային վաշտի 2-րդ հրաձգային դասակի 3-րդ հրաձգային ջոկի հրաձիգ-նռնակաձիգի օգնական, շարքային, ՀՀ կառավարության 27.09.2020թ-ի թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ՝ մարտական գործողությունների իրականացման վայրում՝ Ջրականի շրջանում, զորամասի կազմով բացազատվելուց հետո, պարտավոր լինելով կարգադրությամբ սահմանված համապատասխան վայրում կատարել ծառայողական առանձին պարտականություններ՝ իրականացնել*

պաշտպանություն, 2020 թվականի հոկտեմբերի 8-ին հրաժարվել է զինվորական ծառայության առանձին պարտականությունները կատարելուց, որը զուգորդվել է դրանց փաստացի դադարեցմամբ, այն է՝ թողել է կարգադրությամբ նախատեսված վայրը և վերադարձել է ՀՀ ՊՆ 37564 զորամաս:

(…)

Բացի այդ, շարքային Լեոնիկ Լևոնի Հովհաննիսյանը, զինվորական ծառայության առանձին պարտականությունները կատարելը փաստացի դադարեցնելուց հետո ներկայանալով ՀՀ ՊՆ 37564 զորամասի մշտական տեղակայման վայր՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Նորավան բնակավայր, հանձնել է իրեն ամրակցված զենք-զինամթերքը, ապա 2020 թվականի հոկտեմբերի 8-ին ինքնակամ թողել է զորամասը և միայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2003 որոշման հիմքով արձակվել է ՀՀ ՋՈՒ պահեստազոր՝ այդ կերպ զինվորական ծառայությունից ինքնակամ բացակայելով 240 ժամից ավելի տևողությամբ (…)»[1]*:*

6. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Դատարանը գտնում է, որ թիվ ԱՎԴ1/0188/01/24 քրեական գործն ըստ մեղադրանքի Լեոնիկ Լևոնի Հովհաննիսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 3-րդ մասով և 525-րդ հոդվածի 5-րդ մասով, ենթակա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ընդդատությանը, քանի որ նախ՝ վերջինս ենթադրաբար հանցանքը կատարել է Սյունիքի մարզում գտնվող զորամասն ինքնակամ թողնելով, բացի այդ, նրա վերաբերյալ քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնում, նույն բաժնի քննիչի կողմից ոստիկանության միջոցով ծանուցագիր է ուղարկվել մեղադրյալի բնակության հասցե և վերջինիս՝ քրեական վարույթում ներգրավվելու (վարույթում հայտնվելու) առաջին իսկ պահը հանդիսանում է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում գտնվող ՀՀ ՔԿ 3-րդ կայազորային քննչական բաժին ներկայանալը, այնտեղ որպես*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 162-163:

վկա 2020թ. նոյեմբերի 11-ին հարցաքննվելը, իսկ 2024 թվականի հունիսի 27-ին նույն վայրում Լեոնիկ Լևոնի Հովհաննիսյանին մեղադր[անք] առաջադրելու և հարցաքննելու փաստը, որը ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումների ուժով՝ հանդիսանում է հանցանքն ավարտվելու պահը:

Միևնույն ժամանակ Դատարանն արձանագրում է, որ ծանուցագիր ուղարկված լինելը և մեղադրյալի՝ Արարատի մարզում բնակվելու փաստն ինքնին չի հանդիսանում հանցանքի ավարտման պահ, քանի որ այդպիսի հանգամանքները ներառված չեն ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումներով, որտեղ որպես հիմք նշված է կամ բռնվելու փաստը (սույն դեպքում քրեական գործում առկա չէ Արարատի մարզում վերջինիս ձերբակալելու կամ ՌՀ համապատասխան բաժին ինքնակամ ներկայանալու մասին որևէ փաստաթուղթ), կամ մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահը, որն էլ սույն դեպքում հանդիսացել է քննչական բաժին ներկայանալու փաստը:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասն ունի հետևյալ ձևակերպումը՝ «Տևող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահին գործող քրեական օրենքով»:

Այսինքն՝ օրենսգիրքը նախատեսել է 3 պայման՝

- բռնվելը,

- մեղայականով ներկայանալը,

- այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելը, (ի դեպ՝ ծանուցագիրը հանձնելը սույն հոդվածով նախատեսված չէ, գործում չկա տվյալ այն հանձնելու վայրի մասին), որոնց հերթականությամբ անդրադառնալու դեպքում նախ պետք է սպառվեն նախորդ երկու պայմանները, ապա միայն դրանց անհնարին լինելու դեպքում գործի այլ հանգամանքների ուժով պայմանավորված լինելու հանգամանքը: Իսկ սույն դեպքում առկա է մեղադրյալի ներկայանալը Սիսիան քաղաքում գործող քննչական մարմին, ուստի երկրորդ պայմանի առկայության դեպքում այլ հանգամանքների պարզման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ դրանք

պետք է պարզվեին և կիրառվեին այն դեպքում, երբ բացակայեին առաջին 2 պայմանները:

Ինչ վերաբերում է այն փաստարկին՝ թե 2020թ. դեկտեմբերի 10-ին ռազմական դրությունը վերանալու և զինծառայողի զորացրվելու պահով պայմանավորված կարող է դիտվել հանցանքի ավարտման պահը, ապա Դատարանը հիշյալ պնդումը հիմնավոր չի համարում, քանի որ նշված պարագայում ոչ թե արարքը՝ գործողությունն կամ անգործությունն է ավարտվում, որը հանդիսանում է արարքի օբյեկտիվ կողմը, այլ դա վերաբերում է հանցանքի սուբյեկտին, որը հանցակազմի առանձին տարր է և չի կարող նույնացվել օբյեկտիվ կողմի հետ:

Ավելին, զորացրման հանգամանքով պայմանավորված հանցանքի ավարտման պահը ոչ միայն օրենքով նախատեսված չէ և յուրովի մեկնաբանման արդյունք է, այլ ունի նախաքննությանը և դատաքննությանը խոչընդոտող վտանգներ, քանի որ այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը ստիպված լինի պարզել, թե տվյալ պահին որտեղ է գտնվել մեղադրյալը, քանի որ նրա գրանցման վայրը դեռևս բավարար չէ գնահատելու համար, որ հանցանքն ավարտվել է այդտեղ, քանի որ բազմաթիվ են դեպքերը, երբ արտերկրում գրանցված կամ բնակվող քաղաքացիներ են կամավորագրվել՝ մեկնելու հայրենիքի պաշտպանությանը, և իրատեսական չէ պարզելու, թե շուրջ 4 տարի առաջ՝ 2020 թվականի դեկտեմբերին նրանցից ո՞վ որտե՞ղ է գտնվել:

Բացի այդ, սույն մեկնաբանության դեպքում կիրառելի է դառնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, որի համաձայն՝ «Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը», որը սույն գործով կրկին հանդիսանում է Սիսիան քաղաքը, որը գտնվում է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական ընդդատության տարածքում (…)»[2]:

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 27-29:

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ա]նդրադառնալով սույն գործով մեղադրյալ Լեոնիկ Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով մեղսագրված ենթադրյալ արարքի ավարտման պահին՝ Դատարանն արձանագրում է, որ արարքի ավարտման պահը սույն դեպքում պետք է դիտարկել վերջինիս ՀՀ ՔՈՒ պահեստրազոր արձակվելու ժամանակահատվածը:*

Նախորդ պարբերության մեջ նշվածի կապակցությամբ՝ Դատարանը հարկ է համարում փաստել, որ սույն դեպքում մեղադրյալ Լեոնիկ Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով մեղսագրված արարքը դասվում է տևող հանցանքների շարքին, որոնց բնորոշ է տևական ժամանակահատվածում հանցավոր դրսևորման շարունակական և անընդմեջ իրականացումը, քանի դեռ այն չի դադարել: Ընդ որում՝ Դատարանն արձանագրում է, որ հաշվի առնելով հանցավոր դրսևորման շարունակական և ժամանակային առումով անխզելի ու անընդմեջ բնույթը Օրենսդրի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ «Տևող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահին գործող քրեական օրենքով»:

Խնդրո առարկայի կապակցությամբ՝ Դատարանը հարկ է համարում անդրադառնալ տևող հանցանքի ավարտը կանխորոշող «այլ հանգամանքներ» հասկացությանը, որպիսիք Դատարանի գնահատմամբ հանդիսանում են այնպիսի իրադրությունները կամ իրավիճակները, որոնք կրելով սուբյեկտիվ կամ օբյեկտիվ բնույթ հանգեցնում են արարքի ավարտմանը (օրինակ՝ հատուկ սուբյեկտի կարգավիճակի դադարեցումը (պաշտոնից ազատումը), համապատասխան ակտի ընդունումը, որով ոչ իրավաչափ գործողության շարունակական իրականացումն օրինականացվում է և այլն):

Այսպիսով՝ Դատարանն արձանագրում է, որ տևող հանցանքի ավարտի պահը պայմանավորող այլ հանգամանքներն իրենց բնույթով հանդիսանում են ապացուցողական վիճակներ, որոնք հիմնվելով տարաբնույթ գործոնների վրա կանխորոշում են ընթացքի մեջ գտնվող հանցավոր դրսևորման ավարտը:

Հիմքում ունենալով ներկայացված վերլուծությունները՝ Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ մեղադրյալ Լեոնիկ Հովհաննիսյանին մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքը՝ որպես տևող հանցագործություն, ավարտվել է (դադարել է) իրավական ակտի ուժով, այն է՝ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2003 որոշման հիմքով ՀՀ ՔՈՒ պահեստազոր արձակվելով, որպիսի պայմաններում պահեստազոր արձակվելուց հետո վերջինս չէր կարող համարվել զինծառայող, հետևապես նաև՝ հատուկ սուբյեկտի հատկանիշներ կրող անձ:

Դատարանի կողմից այս առումով ուշագրավ է համարվում այն հանգամանքը, որ քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2020 թվականի դեկտեմբերի 10-ի դրությամբ Լեոնիկ Հովհաննիսյանի կողմից օգտագործվող 093-06-66-19 բջջային հեռախոսահամարը սպասարկվել է Արարատի մարզում տեղակայված ալեհավաք կայանի կողմից, իսկ դրան նախորդող ժամանակահատվածում՝ մինչև նույն թվականի հոկտեմբերի 8-ը, սպասարկվել է Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերում տեղակայված ալեհավաք կայանների կողմից: Այսինքն՝ նման դեպքում, ենթադրյալ արարքի դադարման պահը հանդիսացել է մեղադրյալի ՀՀ ՔՈՒ պահեստազոր արձակվելու պահը, իսկ արարքի ավարտման վայրը՝ տվյալ ժամանակահատվածում մեղադրյալի գտնվելու վայրը:

(...)

Վերը նշված իրավական վերլուծությունների ներքո՝ անդրադառնալով Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Քրեական գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկելու մասին» 2024 թվականի օգոստոսի 9-ի որոշման մեջ տեղ գտած հետևություններին, Դատարանը, հայտնելով դրանց իր անհամաձայնությունը, հարկ է համարում արձանագրել հետևյալը՝

- մեղադրյալ Լեոնիկ Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել 2024 թվականի հունիսի 20-ին, իսկ վերջինիս մեղադրանք է ներկայացվել և նա հարցաքննվել է նույն թվականի հունիսի 27-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ նա այլևս դադարել էր որպես զինծառայող հանդիսանալուց, հետևապես նման դեպքում խոսք չի կարող լինել տևող հանցագործության շարունակական ընթացքի

մասին, քանի որ մեղադրյալի պահեստազոր արձակվելու փաստի ուժով արդեն իսկ ենթադրյալ հանցավոր արարքը համարվել է ավարտված:

- Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նշված կարգավորման կապակցությամբ տրված մեկնաբանությանը, ապա այս ուղղությամբ հարկ է նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով կամ «և» կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ստորակետերով կամ «և» կամ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր պայմանների առկայությունը, իսկ «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:», որպիսի պայմաններում Դատարանի գնահատմամբ «այլ հանգամանքների» առկայությունը, որոնք կանխորոշում են տևող հանցանքի ավարտման պահը, որևէ կերպ չեն պայմանավորում մեղայականով ներկայանալու կամ բռնվելու պայմաններով: Այլ կերպ, անկախ նրանից նախորդ երկու պայմանները (բռնվելը կամ մեղայականով ներկայանալը) սպառվել են, թե ոչ, այլ հանգամանքների վրա հասնելու ուժով, որպիսին սույն դեպքում հանդիսացել է մեղադրյալի ՀՀ ՔՈՒ պահեստազոր արձակվելը, արարքը համարվում է ավարտված:

- Ի վերջո՝ անդրադառնալով նախաքննության կատարման վայրի ուժով սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հարցին, Դատարանի գնահատմամբ սույն կանոնը կիրառելի է միայն այն պարագայում, երբ ենթադրյալ արարքի կատարման վայրն որոշակիացնելու բոլոր հնարավորությունները սպառված են, որպիսին սույն դեպքում բացակայում է:

Այսպիսով, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշումներում շարադրված վերլուծություններն ու դատողությունները, Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործն ընդդատյա չէ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հետևաբար նաև հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատությամբ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից ուղարկվել է Դատարան, որպիսի պայմաններում կրկին քրեական վարույթի փոխանցումը, ըստ ընդդատության հղի է

քրեական վարույթի տարածքային ընդդատության վերաբերյալ վեճի կապակցությամբ կրկնակի շրջապտույտ ստեղծելու վտանգով, ուստի, Դատարանի գնահատմամբ, ստեղծված իրավիճակի հանգուցալուծումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի տարածքային ընդդատությունը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից լուծելով: (...)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0104/01/24 (ԱՎԴ1/0188/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 40-42:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը: (…)»:

Տարածքային ընդդատությունը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածից հետևում է, որ որպես քրեական վարույթի դատական

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

տարածքը որոշելու հիմնական կողմնորոշիչ պայման, հանդես է գալիս վերջին հանցանքի կատարման վայրը:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ապյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը 72 ժամից ավելի, բայց 240 ժամից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ յուրաքանչյուրը մեկ ժամից մինչև 72 ժամ տևողությամբ (…):*

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելը, եթե ինքնակամ բացակայությունը տևել է 240 ժամից ավելի՝ (…):

5. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում (…)»:

14.1. ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելով կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության վայր չներկայանալով: Նշված արարքը տևող հանցագործություն է և ավարտված է համարվում, որպես կանոն՝ բռնվելու, զորամաս կամ իրավապահ մարմին ներկայանալու պահից: Միևնույն ժամանակ, տվյալ հանցանքի ավարտման պահը

կարող է պայմանավորված լինել նաև այլ հանգամանքներով, օրինակ՝ անձը դադարում է տվյալ հանցագործության սուբյեկտ լինելուց՝ ճանաչվում է ծառայության համար ոչ պիտանի, զորացրվում է և այլն:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հիմք ընդունելով Լ.Հովհաննիսյանի կողմից ենթադրաբար հանցանքը Սյունիքի մարզում գտնվող զորամասն ինքնակամ թողնելով կատարելու, ինչպես նաև քրեական վարույթի նախաքննությունը ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժնում իրականացվելու, նույն բաժնի քննիչի կողմից մեղադրյալի բնակության հասցե ծանուցագիր ուղարկելու և մեղադրյալ Լ.Հովհաննիսյանի կողմից Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում գտնվող վերը նշված քննչական բաժին ներկայանալու, այնտեղ որպես մեղադրյալ ներգրավվելու և հարցաքննվելու հանգամանքները, այդպիսիք ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման ուժով դիտարկելով որպես ենթադրյալ հանցանքն ավարտվելու պահ, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին[7]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ որպես արարքի ավարտման պահ տվյալ դեպքում պետք է դիտարկել մեղադրյալ Լ.Հովհաննիսյանի՝ ՀՀ ՋՈՒ պահեստազոր արձակվելու ժամանակահատվածը, իսկ ավարտման վայր՝ տվյալ ժամանակահատվածում մեղադրյալի գտնվելու վայրը, գտել է, որ սույն քրեական գործն ընդդատյա չէ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Անդրադառնալով նախաքննության կատարման վայրի ուժով սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հարցին՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ այդ կանոնը կիրառելի է միայն

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

այն պարագայում, երբ ենթադրյալ արարքի կատարման վայրը որոշակիացնելու բոլոր հնարավորությունները սպառված են, որպիսիք սույն դեպքում բացակայում են[8]:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Լ.Հովհաննիսյանին ներկայացված մեղադրանքից երևում է, որ վերջինիս մեղսագրվում է երկու ենթադրյալ հանցավոր արարքների կատարում՝ առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելը, որը զուգորդվել է դրանց փաստացի դադարեցմամբ, և զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելը՝ 240 ժամից ավելի տևողությամբ: Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է նաև, որ ըստ ներկայացված մեղադրանքի՝ Լ.Հովհաննիսյանը ՀՀ Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի՝ թիվ 2003 որոշման հիմքով արձակվել է ՀՀ զինված ուժերի պահեստազոր: Հետևաբար, Լ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 525-րդ հոդվածի 5-րդ մասով մեղսագրված վերջին ենթադրյալ հանցանքն ավարտվել է 2020 թվականի դեկտեմբերի 10-ին՝ ՀՀ զինված ուժերի պահեստազոր արձակվելու ուժով, քանի որ վերջինս այդ պահից դադարել է տվյալ արարքի սուբյեկտ լինելուց: Նման պայմաններում հաշվի առնելով, որ մեղադրյալ Լ.Հովհաննիսյանը հաշվառված է և բնակվում է Արարատի մարզում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթով ենթադրյալ հանցանքի ավարտման վայր պետք է դիտարկել Լ.Հովհաննիսյանի բնակության վայրը:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հիմնավոր է համարում նաև Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն հետևությունը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնը սույն դեպքում կիրառելի չէ՝ դրանում նախատեսված պայմանների բացակայության պատճառաբանությամբ:

17. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ3/0104/01/24 (ԱՎԴ1/0188/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

18. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՍԴ3/0104/01/24 (ԱՎԴ1/0188/01/24) վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Լեոնիկ Լևոնի Հովհաննիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 3-րդ մասով և 525-րդ հոդվածի 5-րդ մասով թիվ ՍԴ3/0104/01/24 (ԱՎԴ1/0188/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ